ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՎԵԼ

26.09.2019 10:49

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի **19.09.2019թ. թիվ 17/16-Լ որոշմամբ** 26.12.2013թ. ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» **կարգում** կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որոնք ուղղված են՝

- փաստաբանների նկատմամբ կիրառվող անդամավճարի արտոնությունների հստակեցմանը և ընթացակարգի պարզեցմանը,
- անդամավճարի պարտքի հիմքով կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ կարգավորումների հստակեցմանը,
- անդամավճարի պարտքի տարաժամկետման վերաբերյալ կարգավորումների սահմանմանը,
- որոշ դեպքերում անդամավճարի պարտքի՝ դատական կարգով բռնագանձման գործընթաց սկսելուն:

Նշված որոշմամբ փոփոխվել է կարգի 13-րդ կետով կին փաստաբաններին տրվող անդամավճարի արտոնության վերաբերյալ կարգավորումները, մասնավորապես սահմանվել է, որ Կարգի 13-րդ կետի «ա» և/կամ «բ» ենթակետերում նշված արտոնություններից օգտվելու համար փաստաբանը պետք է **մեկ անգամ** ներկայացնի ստորագրված դիմում, որին պետք է կցված լինի՝ առնվազն երեսուն շաբաթական հղիության վերաբերյալ համապատասխան բժշկական փաստաթուղթ («ա» ենթակետում նշված արտոնության դեպքում) կամ երեխայի ծննդյան փաստաթղթի պատճենը («բ» ենթակետում նշված արտոնության դեպքում):

Նշված փոփոխության արդյունքում կին փաստաբաններին տրվող արտոնությունների էությունը չի փոխվել, այլ առավել պարզեցվել է այդ արտոնություններից օգտվելու գործընթացը, քանի որ, ըստ էության, սահմանվել է «մեկ դիմումի» սկզբունքը:

Փոփոխությունների արդյունքում առավել հստակեցվել են նաև կարգի 14-րդ կետով Պալատի խորհրդի որոշմամբ տրվող արտոնությունների տեսակները:

Միաժամանակ, Պալատի խորհրդի **19.09.2019թ. թիվ 17/16-Լ որոշմանը Կարգի 13-րդ կետի մասով տրվել է** հետադարձ ուժ և այն տարածվել է անդամավճարի արտոնությունից օգտվելու վերաբերյալ փաստաբանների կողմից 2016 թվականի հունվարի 1-ից հետո ներկայացված բոլոր դիմումների նկատմամբ՝ անկախ այն հանգամանքից, թե դիմումը նախկին կարգավորման անդամավճարի ո՞ր արտոնության համար է ներկայացվել:

2016 թվականի հունվարի 1-ից հետո մինչև Պալատի խորհրդի 19.09.2019թ. թիվ 17/16-Լ որոշման ուժի մեջ մտնելը արտոնությունից օգտվելու դիմում ներկայացրած փաստաբաններին՝ արտոնություն տրամադրելու կամ արտոնություն տրամադրելը մերժելու հետ կապված հարցերը վերանայվում են շահառու փաստաբանի դիմումի հիման վրա, որի արդյունքում կատարվում է փաստաբանների անդամավճարների վերահաշվարկ:

Կարգում փոփոխություն է կատարվել նաև անդամավճարի պարտքի հիմքով կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ կարգավորումներում: Մասնավորապես, սահմանվել է, որ փաստաբանի նկատմամբ բոլոր դեպքերում կարգապահական վարույթ է հարուցվում, եթե փաստաբանի անդամավճարի պարտքը գերազանցել է 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամը, այսինքն՝ փաստաբանը մեկ տարի անդամավճար չի վճարել:

Բեռնել «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի ինկորպորացված տարբերակը:

Առաջարկվող նորություններ

06.10.2020ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })